

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԽՆՍՏԽԱՆ

Հ. Գ.ՍՊՈՒՐՅԱՆ

ՀԱՅԸՆԻ ԲԱՐԲԱՌՈ

ՀՍՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ-1966

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱԽՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԽՆՍՏՏՈՒՏ

Հ. Գ. Ա. ՊՈ. ԲՅՈՒ. Ն

ՀԱՅԸՆԻ ԲԱՐԲԱՌԸ

A $\frac{\pi}{39645}$



ՀԱՅՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻՑԱՐԱՐ

Ե Ր Ե Վ Ա Ն - 1 9 6 6

ԽՄԲԱՐԴԻ Ռ. Խ ՀԱՅԱՆ Ա. Խ

ԱՄՎԱՐԾՈՒ ՕԳԱՆՆԵՍՈՎԻЧ
ԳԱՍՊԱՐԻՆ

„ԼԱԼԵԿՏ ԱՃԱ”

/на армянском языке/

Издательство Академии Наук

Армянской ССР.

Ереван 1966 г.

ՀԱՄԱԲՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՐԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ

Ակ.	Ակն.	Կմ.	Կոմախ
Ազ.	Ազարտն	Կյ.	Կէյվէ
Արբ.	Արարեկիր	Կս.	Կեսարիս
Արմ.	Արմաշ	Կր.	Կարին
Արս.	Արտան-Բեկ	ՀԲ.	Հին Բայազիդ
Ատ.	Արտարտ գ.	ՀՄՀ.	Համշչին
Ար.Դ.	Արտարտյան Պաշտ	ՀՀ.	Հաջըն
ԲԼ.	Բալու	Հրբ.	Հարաբազ
ԲԲ.	Բերդակ	Հրդ.	Հարազաղ
ԲՆԿ.	Բինկյան	ՂՓ.	Ղափտն
ԳՆՏ.	Գոնձակ	ՂՅ.	Ղարա-Զիլիսէ
ԴԻԼ.	Դիլիջան	ՄԱԲ.	Մալաթիս
ԵԲ.	Երեւան	ՄԿ.	Մոկս
ԵՐԳ.	Երգնական	ՄՂ.	Մեղրի
ԶԲ.	Զեյթուն	ՄՆԳ.	Մանազկերտ
ԶՄ.	Զմյուռնիս	Մը.	Մարտ
ԷՀ.	Էջմիածին	ՈւՖ.	Ուրման
ԼԱ.	Լռոհ	ԶԺ.	Զմշկածագ
ԼՀ.	Լեհակայք	ԶՐԸ.	Զարսանշակ
ԼՆ.	Լենինական	Պ.	Պալիս
Խ.	Խոյ	ՍԵԲ.	Սեբաստիա
ԽԳ.	Խիզան	ՍՎ.	Սիվրի - Հիսոր
ԽԼ.	Խլաթ	ՑԻԳ.	Ցիգրանակերտ
ԽՆ.	Խնուս	ՑԲՀ.	Ցերոխմ
ԽԹՀ.	Խռովոշպէր	ՑԲ.	Ցըրիզունտ
ԽԲ.	Խրիմ	ԲԱ.	Բեսապ
ԽԲԲ.	Խարբերդ	ՕՎ.	Օվաշբեգ
Կ.	Կոբաս	ՖԱ.	Թանուզ

ԱՌԱՋԱԱՆ

Հաջընի բարբառը մինչև օրս ուսումնասիրված չէ։ Հայ բարբառագիտության մեջ այն հիշատակվել է «Կիլիկիայի բարբառ» ընդհանուր անվան տակ և Զեյթունի, Մարաշի բարբառների հետ միասին դիտվել է իբրև Կիլիկիայի բարբառի ճյուղերից մեկը¹։

Հաջընը, Զեյթունը և Մարաշը աշխարհագրական դիրքով իրար նմտն են և մոտ, կազմում են մի եռանկյունի։ Լեզվական իրողությունները ցույց են տալիս, որ Լեռնային Կիլիկիայի այս վայրերի բարբառները առաջացել են նույն աղբյուրից, սակայն հետագայում ինքնուրույն զարգացման պրոցեսում հեռացել են իրարից և ձեռք բերել զգալի տարրերից հատկանիշներ։ Հաջընի և Զեյթունի բարբառի համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս նրանց հաջունական, հատկապես բաղաձայնական համակարգի մեծ տարրերությունները։

Հաջընի բարբառը հայերենի խրթին բարբառներից մեկն է։ Անշուշտ այդպիսի բարբառի ուսումնասիրությունը, այն էլ ոչ հաջընցու կողմից, բավական դժվար է և պահանջում է երկար տարիների համառ աշխատանք։

Հաջընի բարբառը, իբրև կենդանի խոսք, լսել եմ զեռ աշակերտական նստարանից /1910-1911թթ./, իմ ուսուցիչ Պետրոս Մազլումյանից։ Սակայն բարբառի հետ հիմնավորապես ծանոթացել եմ 1915 թվի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին և հետագայում, երբ բախտ ունեցա կենդանի հասնել Սիրիա ու հանդիպել հաջընցիների։

Հաջընցիների հետ ավելի սերտ հարաբերության մեջ մտա, երբ ընդունվեցի Քիլիսի որբանոցը, որի կառավարիչն էր հաջընցի ուսուցիչ Հովսեփ Թաթուլյանը և ուր կային 10-12 հաջընցի երեխաներ, որոնցից էլ ես լսեցի հաջընի բարբառը անաղարտ վիճակում և բավականաշափ յուրացրի այն։

Տասը տարի հետո, 1926 թվի գարնանը, Վեդու շրջանի Արմաշ նորակառույց գյուղում, ուր հաստատվել էինք ներգաղթող հայերը, միանույն շենցում իմ հարևանը եղավ բնիկ հաջընցի, 1871 թվի ծնված, Սարգիս Դաքեսյանը իր ընտանիքով։

1. Տես Հ.Աճառյան, «Հայ բարբառագիտություն»:-էմինյան Ազգ. ժողովածու», Հ.ը.Թիֆլիս, 1913թ.։

Մարգիս Դաթեսյանը անգրագետ, բայց գործունյա մարդ էր և
բացի իր բարբառից ուրիշ հայերեն չէր կարող խոսել, թեև հաս-
կանում էր: Ընտանիքից զուրս խոսում էր թուրքերեն, սակայն
կինը՝ Սեմագյուլը, գրական հայերենով խոսել կարող էր:

Իմ մեջ վերազրդնեց այդ բարբառի նկատմամբ ունեցած վա-
ղեմի հետաքրքրությունը, և որոշեցի գրի առնել բառեր, առակ-
ներ, անեծք, օրհնանք և այլն: Թեև բավական դժվարությամբ,
բայց կնոջ օգնությամբ բարբառային բավական նյութեր գրի առա-
եականն այն էր, որ հարևանության ընթացքում որոշ չափով վարժ-
վել էի բարբառի հնչյունաբանությանը:

Դաթեսյանը 1929թ. օգոստոսին մահացավ, և իմ ծրագիրը մնաց
թերի: Բայց չվհատեցի: Հնարավորություն ունեցած ժամանակ
որոնում էի այնպիսի հաջընցիներ, որոնց իրենց իսկական բար-
բառը չէին մոռացել. և երկար ընդմիջումներից հետո, բավական
դժվարությամբ գտնում էին այդպիսիներին, թեև ծանոթություն-
ները լինում էին խիստ կարճատե ու հաճախ. Նպատակիս չէի հաս-
նում: Ամենուրեք փնտրում էի այդ բարբառին վերաբերող գրա-
կանություն, որը ստկայն խիստ համառոտ տեղեկությունների բը-
նույթ էր ունենում: Բացառություն էր կազմում Հ.Աճառյանի
աշխատությունը, որը գտնվում է ուժմինյան ազգագրական ժողո-
վածու" -ի Ը. Հատորի 199-րդ էջում:

Վերջապես 1946 - 47թ.թ. արտասահմանից Սովետական Հայա-
տան ներգաղթած հայերի մեջ, զանազան վայրերում ծեր հաջըն-
ցիներ գտա և նրանցից բավական օգտվեցի՝ նոր բառեր, բայերի
խոնարհումը և այլ նյութեր աշխատությանս մեջ ավելացնելով: Ստ-
կայն դեռ շատ պակասություն կար. թիշ տեքստեր ունեի, որ-
պեսզի հիմնականապես պարզեի բարբառի հնչյունական համակարգը:
Մանոթացա նաև մրանսիայից ներգաղթած մաթեմատիկայի դասառու
էզվարդ Գլուխյանի հետ, որն ինձ համար հայթայթեց "Հաջընի
ընդհանուր պատմություն" գիրքը: Սա մեծ դեր խաղաց իմ այս
աշխատությունն ավարտելու գործում:

Աշխատությանս մեջ հնչյունաբանության և ձևաբանության մի
քանի հարցերի կապակցությամբ, ինչպես և բանահյուսական մասի
լրացման ու դասավորման ժամանակ օգտվել եմ այդ գրքի "Հաջը-
նի գավառաբարբառը" բաժնից, որ պարունակում էր բարբառի բա-

ռարանը և ձևաբանության շատ համառոտ տեղեկություններ։ Այդ
գլուխի հեղինակներն են Հաջընցիներ Եփրեմ Սեցսենյանը և Գևորգ
Գուշյանը /ինչը Գեղե-Գուշյանը/։

Հնչյունների ճիշտ արտասանության ու առօգանության, բայց
խոնարհման ու գոյականների հոլովման ձևերի մասին, ինչպես և
Հաջընի քնակչության կազմի վերաբերյալ տեղեկություններն
ստացել եմ հին սերնդի Հաջընցիներ՝ Լևոն և Գրիգոր Սինանյան
եղբայրներից, Լևոնի կնոջից /Խաթուն Սինանյանը, որը Հաջը-
նում ուսուցչուհի է եղել/, Առաքել Բահատրյանից, Գևորգ Թար-
յանյանից, (Եղենյան) Փանոս Ավշարյանից, Բարսեղ Կոփուջյանից
Սեղրակ Էզնեյանից և իմ ընկեր Ահարոն Մանգրյանից, որն ամե-
նից շատ է օգնել ինձ։

Խորին շնորհակալություն եմ Հայտնում վերոհիշյալ անձե-
րին, այն բոլոր ընկերներին, որոնք իրենց զանազան ցուցում-
ներով օժանդակեցին այս աշխատությունս Հնարավորին չափ բա-
րելավելու գործին։

Բարրառի ուսումնասիրությունը կատարելիս հետևել եմ մե-
ծանուն Հայագետ Հրաչյա Աճառյանի բարրառագիտական աշխատու-
թյունների կառուցվածքին և նյութերի դասավորությանը։

Հաջընն իր աշխարհագրական դիրքով լեռնային Կիլիկիայի հայաբնակ կարևորագույն կենտրոններից մեկն է: Եղել և իր ամուր ու անմատչելի դիրքով գրեթե չէր զիջում Զեյթունին, Կապանին, Կուկալակի-Ռոտնը կամ ո՞րունք-Կիլիկիոյ"-ին /այժմ Թյուլեկ Բողազի/: Քաղաքի գտնվելու վայրն է Գրինվիչի շափով 36° երկարության, 38° լայնության տակ¹:

Հաջըն քաղաքը կառուցվել է Տավրոսյան լեռնաշղթայի հարավարևելյան ճյուղավորման խորքը գտնվող Թերմես լեռնան Հանդիպագոտիներից մեկի վրա, ծովի մակերևությունից 140մ բարձրությամբ: Օսմանյան հին վարչական բաժանումով Աղանայի Վիլայեթի Գողան սանճագի /Սիսի գավառ/ ամենամեծ և ամենակարևոր քաղաքն է եղել²:

Մեսրոբ քհն. Օրջանյանի Նկարագրության համաձայն /ո՞նոր Հաջըն/ թերթ/ քաղաքի արևելքից և արևմուտքից բարձրանում են Տավրոսյան լեռնաշղթայի ճյուղերը, իսկ Հյուսիսից և հարավից նեղ ու օճապտույտ կիրճեր են, որոնց միջոցով Հաջընը հարավից կտպվում է Ֆեքեհ /Վահկա/ և Դաշտային Կիլիկիայի, իսկ Հյուսիսից և Հյուսիս-արևելքից Ուրումու և Նար գյուղերի հետ, այնպես, որ դրսից Հաջըն գնացողը "Հանկարծ" իրեն գրանում է անմիջապես քաղաք մտնելիս: Հաջընը Կիլիկիայի և Կապաղովկիայի միացման կետն է:

"Հաջըն" անվան ծագման մասին կան զանազան կարծիքներ. ըստ Մ. Զամշյանի և Ռ. Ալիշանի Հաջընի հին "Աշէ" ավանն է, որի անունը հետագայում փոխվել է "Հաջըն"-ի: Ուրիշ ենթաղրությամբ Հաջընը իբր թե Հունական ամենահին քաղաքներից ԲԱՂԵՄՈՆ քաղաքի տեղումն է, որը հետո եղել է հեթական քաղաքներից մեկը՝ "Հարգան" անունով. /Հաջընի տեղը նախկին Հարգանից տառը Կիլոմետր դեպի Հյուսիս արևմուտք է գտնվում/:

1. Հ. Պողոսյան - Հաճընի ընդհանուր պատմություն, Բութոն,

1944թ.

2. "Կիլիկիա". Մատենադարան, «Արագ»-ի Գետերորուրգ, 18942
էջ 301:

Հաջընցիները, ստկայն, տարբեր ավանդություններ են պատմում, որը հարմար չտեսանք այստեղ գրելու, բուն նպատակից չշեղվելու համար:

ա/ Հաջընը լեռնային գիրք ունի և շրջակայքի հետ կապող խիստ դժվարանցանելի ճանապարհներ. կան շատ գեղեցիկ, հրաշալի բնական տեսարաններ: Քաղաքը շրջապատող բազմաթիվ այգիները տուատ գինի են տալիս, մայրիների, սոճիների և սոսիների անտառները հրաշալի տպավորություն են գործում ուղղակի վրա:

բ/ Հաջընի բնակչության թիվը մասին կան զանազան տվյալներ: Ըստ "Կիլիկիա" գրքի, 1880-ական թվականներին Հաջըն քաղաքի բնակչությունը եղել է 13.000 շուրջ, որոնցից մահմեդականները շատ առնչան մասն են կազմելիս եղել: Ըստ Սմբատ Բյուրատի "Զեթունի պաշտպանութիւնը" գրքի, 1890-ական թվականներին, Հաջընում հաշվվել է 7000 տուն հայ, իսկ Զեյթունում՝ 1500 տուն: Ըստ "Հաջընի ընդհ. Պատմութիւն" գրքի, քաղաքն ունեցել է 35 հզ. բնակիչ թիվն հայտնի չե: Թե ո՞ր թվին/։ Մի այլ աղբյուրից իմանում ենք, որ Հաջըն քաղաքը 1791 թվին ունեցել է 3000 տուն հայ բնակիչներ²: Ըստ մեծահասակ Հաջընցիների Վկայության, Հաջըն քաղաքը 1915 թվին ունեցել է 12.000-ից ավելի անտեսություն կամ ծուխ, ևսոն Արևոնյանի պնդմամբ՝ մոտ 15.000 ծուխ, գրեթե 70 հազար բնակչությամբ՝ որտեսից մոտ 150 տնտեսություն Յուրցեր, Նրանց մեծ մասն էլ դրսից եկած պաշտոնյաներ: Հակաբ Թոփանը գոյացած էր երկար տարիներ Հաջընի ահն. բաժնում / Հայոց Տիեզերական տեղական առաջնորդ է եղել, պատմում է, որ համաձայն 1910թ. կառավարական պաշտօնական տարեզրի առաջնորդությանը ավագ է եղել Հայտարարել է, որ բացի գինվորական ըն-

թալութեամբ՝ Հաջըն քաղաքն ունեցել : 15.000 ծուխ: Այլ անձինք, որոնք կառավարության գործին մոտիկ են եղել, տեղեկացնում են, որ 1915թ. Հայերի տեղահանության ժամանակ Հաջընի Հայերին տեղահանող պաշտոնյան / ծեսութեամբ ավագի Ավագի-Բեյը Հայտարարել է, որ բացի գինվորական ըն-

1. "Հաճընի ընդհանուր Պատմութիւն", էջ 102:

2. Ենք, "Հայոց պատմություն", հ. 9, էջ 741, Երևան, 1947թ.

տանիքների և սկզբում հայ գինվորների ընտանիքները չէին տեղահանում / տեղահանել է 64.000 շունչ / Հայտարարել է 1915թ. Աղանայում ժերբակալված Հաջընի երանելիներին / :

Հաջըն թաղացն ունեցել է 5 թաղային շրջանակներ, յուրաքանչյուրը երեքական թաղային լիազորներով (միայն լուսավորչականները) :

Թաղերը հետևյալն են՝

ա/ Ղըրըմենց թաղ 1-ին, 2-րդ, 3-րդ:

բ/ Մանգըրենց թաղ 1-ին, 2-րդ, 3-րդ:

գ/ Թռփշոնց " 1-ին, 2-րդ, 3-րդ:

դ/ Ղալենտեր " 1-ին, 2-րդ, 3-րդ:

ե/ Դըլըսըմ " 1-ին, 2-րդ, 3-րդ:

Ղըրըմենց 2-րդ.ը Գոփուշենց թաղ

Ղըրըմենց 3-րդ.ը Գելիկենց "

Թռփշոնց 3-րդ.ը Զոբնենց "

Դըլըսըմ 2-րդ.ը Զարիշոնց " և այլն:

Կար նաև „Յազուն թաղ“-ը, որը ամենահին թաղն է եղել և Հաջընի բնակիչները սկզբում տպրել են այդ թաղի թարայրներուն

Թռւրթերի թաղն առանձին է եղել։ Բացի այս թաղային լիազորներից, բողոքականները, կաթոլիկները և թռւրթերն ունեցել են իրենց առանձին լիազորները։ Այսպիսով Հաջընն ունեցել է 21 թաղային լիազորներ։ Սարգիս Դաքեօյանն ասում էր 18 մըխտարություն / թաղապետություն / է եղել։

Հաջընի գյուղերից զուտ հայ և հայտառն բնակչություն ունեցել են հինգ գյուղեր, որոնք խոսելիս են եղել Հաջընի բարբառով, կամ թռւրթերեն։ Այդ գյուղերը հետևյալն են՝

ա/ Շ Ա Ր 500 տնտ. միայն հայ և հայտառնուն:

բ/ ՈՒՐՈՒՄԼՈՒ 150 " հայեր և թռւրթեր:

գ/ ԳԱՐԱ-ՔԷՅՑ 160 " միայն հայ / հետո խոսելիս են եղել թռւրթերեն / :

դ/ ՔՅՈԹՈՒՆ 30 " հայեր և թռւրթեր:

ե/ ՓԱՆԼԸՆ 15 " " "

Մնացած գյուղերի մի մասը զուտ թռւրթարնակ է եղել, մի մասն էլ հույն ու թռւրթ խորը բնակչությամբ։

Հաջըն քաղաքում եղել են ինը հայկական դպրոցներ, որոնցից հինգը լուսավորչական համայնքինը /3 տղայոց, 2 աղջկանց/ երկուսը հայ բողոքականներինը /մեկն աղջկանց, մյուսը՝ տղայոց, աղջկանց դպրոցն ավելի հին է եղել/ և մեկ երկսեռ դըպրոց ունեցել են հայ կաթոլիկները։ Եղել է նաև ամերիկյան կոլեջ 400-ից ավելի ուսանողներով՝ բալոր դպանանցներից։

Բացի այս դպրոցներից Ս.Հակոբի վանքին կից եղել է որբանոց-դպրոց մոտ 500 երկսեռ որբերով, որոնց հավաքվել են 1909 թվականին Աղանայից և Նրա շըշակայթից, նույն թվի գարնանը տեղի ունեցած հայկական ջարդի պատճռուավ որբ մնացած երեխաներից։ Ըստ տեղեկության, Աղանայում կոտորված հայերի մեծամասնությունը հաջընցիներ են եղել։ Ս.Նզիտ վանքին կից նույնպես եղել է որբանոց-դպրոց 7-800 որբերով, որի ծախսերը հոգալիս են եղել տեղական բյուջեից։

Եղել է նաև ամերիկյան որբանոց միսի.Համբերտի ղեկավարությամբ։

Լուսավորչականների դպրոցների թվի ավելացումն ու կանոնավորումն սկսվել է 1909 թվականից։ Մինչ այդ, երեք եկեղեց ցիներին կից եղել են երեք ծխական դպրոցներ, որոնցից մեկը միայն հավատարգելիս է եղել մեր յաթնամյա դպրոցի աստիճանին։ 1909 թվից հետո մի հարկանի դպրոցական շենքերը դարձրել են երկհարկանի, իսկ մեկը՝ թեմական դպրոցը՝ եռահարկ։ Այս վերջինը կառուցվել էր Կ.Պոլսի "Միացյալ Ընկերության" ծախսով, որի գանձարկում հաջընցիներն ունեցել են իրենց բաժինը։ Հետագա ծախսերը ևս հոգացվել են "Միացյալ Ընկերության" կողմից և բոլոր դպրոցները ղեկավարել է Կ.Պոլսի Ռւսումնական-Խորհրդարդը։ Դպրոցներն ունեցել են երեք բաժանմունք՝ մանկապարտեզ, նախակրթարան և վկայական։ Ուսումն եղել է ձրի։

Լուսավորչականներն ունեցել են երեք եկեղեցի՝ Ս.Աստվա-

1. Հայերն ըստ դավանանցի եղել են՝
ա/ Բողոքականներ՝ 8000 - 10,000 հոգի
բ/ Կաթոլիկներ՝ 1800 - 2000 "
- Մնացած մեծամասնությունը կազմել են լուսավորչականները։

ծածին, Ս. Գևորգ և Ս. Թորոս, բազոքականները՝ երկու ժողովա-
րան, իսկ կաթոլիկները՝ մեկ եկեղեցի /Ս. Անտոն/։ Բացի եկե-
ղեցիներից լուսավորչականներն ունեցել են Ս. Եղիշ, Ս. Մարգիս,
և Ս. Հակոբ վանցերը։ Այս վերջինը Հաջընի հատգույն և հոյտ-
կապ վանցն էր, որ, ըստ ավանդության, կառաւցվել է Հաջընի
հիմնադրումից շատ առաջ։ Ըստ Կիլիկիայի գրքի, վանցն ունե-
ցել է ամրակուռ պատեր, և վերջին նորօգումը եղել է 1500
թվին։ Այս վանցի շինության մասին հաջընցիների մեջ սերնդից
սերունդ պատմվել է հետևյալ ավանդությունը։

Բյուզանդիայի Հոգհաննես Զմշկիկ կայսրը 969 թվին նրուտ-
սաղեմից վերադառնալիս՝ Հակոբ Առաքյալի իրեն նվիրած մատու-
ցի մի մասը ջորու վրա բարձած փոխադրելիս է լինում Բյու-
զանդիա։ Ճանապարհին իշխանում է այն վայրի տրևմայան կողմը
գտնվող լեռան ստորոտում, ուր հետագայում հիմնվել է Հաջը-
նը։ Հաջընդ առավոտ ուղղվորվելիս մի անակնկալ դեպք է պատա-
հում։ Իրը թե մասունքը կրող ջորու ստցերը առավոտյան բեռք
բարձելու ժամանակ կթուել են ու ջորին ցած է ընկել։ Փորձել
են մյուս ջորիներին բառնալ, նրանք ևս նույն վիճակին են
արժանացել։ Այս «Հրաշք»-ի մասին հայտնում են կայսրին, որը
վախեցած՝ հրաման է տալիս այնտեղ մի մատուռ կառուցել և ա-
նունը դնել Ս. Հակոբ։ Ըստ տեղեկությունների՝ այդ վանցը պաշտ-
պանական ամուր դիրք է ունեցել։

Դ/ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԱԳՈՒՄԸ.՝ Հաջընի բնակչության նախնի-
ների մասին պատմական տեղե-
կություններ չկան։ Հաջընցիներն ավանդաբար ասում են, որ
իրենց նախնիները եղել են յոթ եղբայրներ, որոնք պարսիկնե-
րի ձեռքից իրենց հոտերով Ղարաբաղի կողմից գաղթել և զիրքի
ու արրտի հարմարության պատճառով հաստատվել են այդ վայրամ,
որը անուն չի ունեցել։ Որոշ Հաջընցիներ են ասում են, թե
իրենց նախնիների մի մասը գաղթել է Վանա, Սասնա և այլ կող-
մերից, մեծամասնությունը՝ Ղարաբաղից։

Այս ավանդության մեջ, անշուշտ, որոշ ճշմարտություն կա-
րայց այն միայն Հաջընի բնակչությանը չէ, որ վերաբերում է
որովհետև պատմությունից գիտենք, որ Կիլիկիայի հայ բնակ-
չության նախնիները կամա թե ակամա, գաղթել են Մեծ Հայքի

զանազան գավառներից և Նախապես Հաստատվել Կապաղովկիայում
ու Լեռնային Կիլիկիայի սահմաններում։ Օրինակ, Արծրունյաց
Սենեքերիմ թագավորը 1021 թվին տեղափոխվեց Սեբաստիա, Գագիկ
2-րդ Բագրատունին՝ Կապաղովկիա, Հաստատվելով Պիզու քաղաքում
ու շրջակայցում /1045թ./։ Վանանդի թագավոր Գագիկը նույն-
պես Կարսը Հանձնեց Բյուզանդիային և փոխադրվեց Կեսարիայի
շրջանի Սամնդավ գավառը /1065թ./, իսկ Օշին իշխանը մյուս-
ների նման իր տոհմով ու զինվորներով 1073թ. Գանձակից տե-
ղափոխվեց Կիլիկիա և տիրեց Լամբրոն անառիկ ամրոցին, որ Հա-
ջընից մոտ 130 կմ. Ծեռավորություն ունի /դեպի Հարավ արև -
մուտք/։

Դ.Ալիշանն ասում է, որ 900-910թթ. 50 հայ իշխաններ, ո-
րոնց թվում, ավանդությունը ենթադրում է նաև Առյուծ ՄՇերին
ու Դավթին, իրենց հոտերով Սասունից գաղթել ու Հաստատվել
են Տավրոսի Հարավային անմատչելի կատարներին։

Ուստի եթե ստոյգ իցե նշանակեալն Այրիկանեցի ժամանակագրին
ի սկիզբն ժ.դարու, յամս 900-910, Արք յիսուն, իշխան Սա-
սունցի Նեղեալ ի թուրքաց գնացին ի Կիլիկիայ եւ Աստծով տի-
րեցին սակաւ առ սակաւ”¹։

Քանի որ Հաջընը գտնվում է Կիլիկիայի ու Կապաղովկիայի
սահմանագծում եւ, ըստ պատմական որոշ տվյալների, ենթադր-
վում է, որ Հիմնվել է 14-րդ դարի վերջում և 15-րի սկզբում,
այսինքն Կիլիկիայի Հայկական թագավորության անկումից Հետո,
ուստի Հավանական է, որ դաշտային Կիլիկիայի հայ բնակչու-
թյան մեծամասնությունը թուրքերից ու մեմլուկներից պաշտպան-
վելու Համար ամրացել է այն ղժքարամատչելի վայրերում, որի Դ
հիման վրա Նրանց Հաջողակել է մինչև 1915թ. պահանձել իրենց
լեզուն։ Հետագայում Հաջըն են գաղթել նաև Կապանից, Կոկիսո-
նից, Ալպուստանից և այլ վայրերից, իսկ Հաջընից եւ ոմանք
փոխադրվել են Դաշտային Կիլիկիա։

Կարապետ Բավուկյանը Հետայր տեղեկությունն է տալիս.

ոԿիլիկիո թագավորության անկումին 50 տարի Հետո /1425թ./
Եգիպտական կառավարությունը կկարգադրե գերիներուն իրենց

1. Դ.Ալիշան, “Սիսուան”, Վենետիկ, 1885թ. էջ 47։

ԵՐԿԻՐԸ ՎԵՐԱՊԱՆՆԱԼ : Այս ատեն Հիսունի չափ ընտանիք կուգան
և այժմու Հաջընի բերդի քարայրներուն մեջ Ս.Աստվածածնու
մոտերը կը բնակվին : Երուսաղեմի պատրիարքը՝ Բարդուղիմեոս և
Պողոս Եպիսկոպոսները և Հովհաննես վարդապետը, վեմ քարով
Հաջըն կղրկն, որոնց կը շինեն բերդի եկեղեցին ու կանվանեն
Ս.Աստվածածին...":

„Այդ մշնոցին, 1495թ. ատենները Պարսկաստանեն, Սըրուբ -
նեն, Իզմիրեն, Եամեն, Ղարաղողեն, Կեսարիայեն, Բիւթանիա -
րեն, Պաղտատեն, Քրդստանեն, Հալեպեն և այլ տեղերն գաղթա-
կաններ կուգան Հաջըն : Այսպեսով, Հիմք կը դրվի Հաջըն ավա-
նին, իսկ անոնց քարրառի խառնուրդն ծագում կառնե Հաջընի
լեզուն" :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԱԶԵՆԻ
ԲԱՐԲԱՌԻ ՄԱՍԻՆ

Հաջընի բարբառը Կիլիկիայի քարբառներից մեկն է /Կ ճյու-
ղի/: Հաջընի բարբառը թեև շատ նման է Զեյթունի բարբառին,
բայց հաշվունաբան զգալի տարրերություններ կան նրանց
միշտ, Հատկապես Ռ բաղամայնի, Ա,Օ Ճայնավորների և երկունչ -
յունների գործածության մեջ։ Խնչ վերաբերում է Մարտշի բար-
բառին, ապա Հաջընինը շատ տարբերվում է նրանից։

Այս հիման վրա էլ Լեռնային Կիլիկիայի բարբառներում,
չհաշված Քեսապի, Ավեղիայի, Բեյլունի, Անթարիայի /Անտիոք/,
Խոկենաբունի /Ալեքսանդրիա/ և Փայտայի, Արամոյի ու Թարու-
սիի բարբառները, բաժանվում են երեք խմբի։

Ա/ Զեյթունի խումբ. - այստեղ մտնում են Զեյթուն, Ֆրնուզ,
Կապան, Արեգին, Ավագ-Կալ, Յարփուզ, Ալպուստան և այլն /20-
22 հազար բնակչությամբ/։

Բ/ Հաջընի խումբ. մտնում է Հաջըն բաղացը իր 5 հայախոս
գյուղերում։ Հաջընի շրջակայթում գտնվող Վահկա /Ֆեքի/, Կարս-
Բազարի, Սիս և այլն։ Գյուղերի հայ բնակչության մեծամասնու-
թյունը թուրքախոս է եղել, բայց հայախոսները խոսել են Հա-
ջընի բարբառով։ Այդ բարբառով խօսող բնակչության թիվը հար-
յուր հազարից ավելի է եղել։

Գ/ Մարտշի խումբ. սրա մեջ են Մարտշ բաղացը, Ֆընդըշաղ,
Հարնի, Բաղյա, Ենի-Թօյ, Թելլեր, Չորք-Մարզպան /Դժոթ-Թօլ/
ևլն. /մոտ 80 հազար բնակչությամբ՝ չհաշված թուրքախոս հա-
յերին/։

Կիլիկիայի այս երեք խմբի բարբառների տարբերությունները ցույց տալու համար ստորև բերում ենք մի համառոտ աղյու-
սակ ոհաջընի ընդհ.Պատմություն" գրքից, որ ստուգել ենք
նույն վայրերի նախկին բնակիչների միջոցով և որը ներկայաց-
նում է հայերեն միևնույն բառերի տարբեր արտասանություննե-
րը հիշյալ բարբառներում։

Գրական լեզու Հաջընի բարբ Զեյթունի բարբ. Մարտշի բարբ.

Հաց	Հոց	Հօց	Հոց
Զուր	ճույ	ճօյ	չոր

Ապուր	աբույ	աբօյ	աբուր
Զըռէյց	զըյից, զէյից	խօսք	ձըրուցք
Մայր	մայ, մայիգ	մայ	մար
Աղջիկ, աղջիկներ	աշգին, տնկին	ախճըն,	ախճին,
	անկինդիք	ախճնղաք	ախճինղաք
Անալի	անլի	անլը	ալլա
Երկու	էյգուց	իյկուց	իրգուց
Երեք	ժիէք	իյիթ	իրիթ
Չորս	չուէյս	չույս, չուրս	չուրս
Հարյուր	հէյի	հայույ	հէրիր
Ես /անձ/	եիէս	իս	իս
Դնել, դրի	տընիէլ, տըյի	տէնիլ, տէյի	դնել, դրա
Երթալ, գնացի	իշտոլ, կածձի	իյթոլ, կացի	իթալ, գացա
Պիտի երթամ	բէշդօմ	բէյթօմ	բըգիըրթամ
Ասել, ասի	ասսիէլ, ըսսի	ասիլ, ասը	ըսի, ըսա
Վրա	վիյան, վիյօն	վըրէն	ի վըրէն
Երեկո	իյգըզօն, իյիգֆն	իյգյուն	իբցօն
Ինչպե՞ս ես	ինչոէց ինս	չո չ իս	չոյց ես
Բարի լույս	պայի լիս	պայլուս	բարա լուս
Գիշեր բարի	շիշե պայի	կիշէյ պայը	ձիգ գիշիր բարա
Մնաս բարով	մնացիյ պայէվ	գինոս պայը	գեցիր բարիվ
Երթաս բարով	իշգօս պայէվ	իյթոս պայը	ըրթոս բարէվ
Շատ ապրես	շոդ աբյիս	շոդ արիէս	շոդ աբրոս
Քովը, մոտը	քէվի, մէղի	քօվը	քօվը, խեչը
Շնորհավոր	իշնավուէյ	իշնիհառը	իշնէվուէր
տարի	դայի	դայը	դարա

Ըստ Ա.Ալբոյանյանի Հաջընի բարբառին որոշ Նմանություն ունեն Կիզիստրայի /Կապաղովկիայի հարվ.մասի/ բարբառը, հատկապես Թոմարզայի, Սօյլուղլիի, Թաշխանի և Զոմփնլուի բարբառները¹: Մեր կարծիքով, սակայն չի կարելի ասել, որ նույն ծագումն ունի որոշ բառերի Նման արտասանությունը այս բարբառներում: Ավելի հավանական է, որ Նմանությունները Հետագայում են առաջացել բնակչության շփման շնորհիվ: Այդ վայրերի բարբառն ավելի մոտ է Սեբաստիայի բարբառին, բնորոշ է հատկապես կրկնակի և մասնիկը, որը բայի սկզբում զրվում է՝ գ. վերջում՝ ԳՈՆ ձևով, օր, ի՞նչ գենէս գու, ու՞ր գիհասկերթաս գու /Սեբաստիա/, ուր գերթաս գու /Կեմերեկ/ ի՞շ գըսիս գը /Ակն/: Կրկնակի ԿԸ գործածվում է նուև Լենինականի, Կարսի, Էրզրումի նահանգի Հյուսիսային մասի բարբառներում:

1. Ա.Ալբոյան, - "Գատմութիւն Հայոց Կեսարիոյ", Հ. Բ., էջ 1657-1663, Կահիրէ, 1937:

Ինչպես արևմտահայ լեզվում, նույնպես Հաջընի բարբառում գրաբարյան ձայնեղները դառնում են խուլ, իսկ խուլերը՝ ձայնեղ. բ>պ, պ>բ, գ>կ, կ>գ, դ>տ, տ>դ, ձ>ծ, ծ>դ,

ջ>ճ:

Թեև տկաղեմիկոս Հ.Աճառյանը, ըստ երևույթին, հենվելով Զեյթունի բարբառի վրա, Հաջընի բարբառի պայթական բաղաձայների համակարգը բնորոշում է իրրւ եռաստիճան իլազուրկ, այսինքն բ, թ, փ, գ, զ, ձ, ժ, չ, չ, չ և լ / ումինյան ազգագրական ժողովածու "Հատոր Ը/։ Սակայն մենց այս բանը ծեր հաջընցիների միջացով մանրակրկիտ ստուգման ենթարկելով՝ հանգեցինք այն եզրակացության, որ Հաջընի բարբառում պայթականներ՝ հիմնականում ենթարկվում են եռաստիճան տեղաշարժ տեղափոխության, Այսինքն, գրաբարյան խուլերը դառնում են ձայնեղնիսկ հայնեղները՝ խուլ։

Այնուամենայնիվ, Հաջընի բնակչությունը տարբեր վայրերից հավաքված լինելով խռով է տարբեր բարբառներով, որոնք հետագայում միացել են մեկ բարբառի մեջ։ Սակայն բնակչության որոշ մասը պահպանել է պատճենական հնչումը, հատկապես, պայթականներինը։ Այդ պատճառով էլ բնական բառեր արտասանվում են պրոճ. Հ.Աճառյանի տաճ սիստեմով, այսինքն խուլերը, երբեմն էլ ձայնեղները, դառնում են շնչեղ ձայնեղ, և ստացվում է բառաստիճան սիստեմ, որի մասին խոսվելու է հնչյունաբանության գլխում։

Հաջընի բարբառում, առանձնապես երկվանկ բառերում շեշտվող ձայնավորները դառնում են շեշտվող. բըսօգնպագ, ոյտոյւ արդար, գայթոււկարդալ և այլն։ Այսպիսով, բառային շեշտը ըստ կանոնի չի գործածվում։

Հաջընի բարբառում խիստ նկատելի է արտրական և թուրքական լեզուների ազդեցությունը, ոչ միայն բառպաշտրում, այլև այն բանում, որ օգտագործվում են այդ լեզուներին հատուկ երեք ձայնավորները՝ Յ Ո Յ Այս հնչյունները հայերեն ար-

1. Տարբեր բարբառների խաչավորման այս տիսակետը, ինչպես և Հեղինակի մի քանի այլ տեսակետներ / որ Հաջընի բարբառի հիմքը միջին հայերենն է, որ ում ճյուղի բարբառը թուրքերենի ազդեցությամբ կարող է վերածվել Կ ճյուղի բարբառի և այլն խմբագիրը չի ընդունում։

տահայտելու համար ա, ու և օ ձայնավորների վրա ավելացրել
եմ երկու կետ /.../: Այս հիման վրա կարող ենք տաել, որ Հա-
շընի բարբառն ունի 9 ձայնավոր, երկու երկբարբառ, իսկ երկ-
հայշունները՝ 12 են: Սահմանական ներկայի և անցյալ տնկառա-
րի մասնիկն է Կ/ԳՐ/: Ունի մի շարք հոգնակիակերտ մասնիկ -
ներ: Օրինակ՝ իէյ /եր/, նիէյ/ներ/, զնը, էզ, վընիք,
իզ, վուէնք, անք /օնք/ և լն... կա նաև ստաննի /էգեստննի/
այգիներ/: Այս մասնիկներից կան նաև Ստունի, Լեհակայ, Ղա-
րաբաղի և Սոփթի բարբառներում:

Հաշընի բարբառում կան թուրքերնից, արաբերնից և պար-
կերենից փոխարյալ շատ բառեր, որոնց մի մասի վերամասնիկը
սղված է և հիմքի վրա ավելացված է ոնուլ /լինել/ օժանդակ
բայկ. օրինակ զուլզէնմիշնոլ, /մտածել/, յաշամիշնոլ /ապ-
րել/ մի մասն էլ գործածվում է առանց այս փոփոխության, օր.
ամանպի /պանդ/, ահոլի /ժողովուրդ/. արք. ՇՆԱ պահանջանառ
ՄՅԻ ճհալի

Ուսումնասիրելով Հաշընի բարբառը, հանգում ենք այն
եզրակացության, որ այդ բարբառի հիմքը կազմում է միշին Հա-
յերենը:

A 396 ԿՀ



Ա Բ Ա Զ Ի Ն Մ Ա Ս

Հ Ե Զ Յ Ո Ւ Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ն

Հաջընի բարբառի հնչյունական կազմը հետևյալն է.

ա/ Զայնավորներն են՝ Պ. ա, է, ը, ի, ու, օ, պ, ու, օ

բ/ Բաղաձայնները 30 են.

թ, պ, փ,	գ, ս,
----------	-------

գ, կ, թ,	ժ, շ,
----------	-------

դ, տ, թ,	դ, խ,
----------	-------

ձ, ծ, ց,	մ, ն,
----------	-------

շ, ճ, չ,	հ,
----------	----

յ:

լ:

ը, ռ,

վ, օ,

Ընդամենը 39 հնչյուն:

Երկբարբառները երկուսն են՝ Ե, Ո:

Ա, Է, Ը, Ի, Ու, Օ ձայնավորները և բռնոր բաղաձայնները, ընդհանուր առմամբ, համապատասխանում են գրաբարի միևնույն հընդուներին:

Ա, ՈՒ, Ը քմային կամ փափուկ ձայնավորներ են և գործածվում են գերազանցապես փոխառյալ բառերում, սակավ դեպքերուանու հայերեն բառերում:

Ե երկբարբառը արտասանվում է Իէ, իսկ Ո-Ն՝ ՈՒէ, երբեմն Էլ՝ Ոէ և ընդհանուր առմամբ համապատասխանում է Վանա բարբառի Ե, Ո երկբարբառներին:

2. Զ Ա Տ Ն Ա Վ Ո Ր Ն Ե Ր Ի Գ Ո Ր Ծ Ա Ծ Ո Ւ -

Բ Յ Ո Ւ Ն Ը

Ա

Հայերենի Ա հնչյունը Հաջընի բարբառում մի շարք հնչյունափոխությունների է ենթարկվում, սակայն հետևյալ երկու դեպքերում, բառասկզբում և բառամիջում մնում է անփոփոխ:

1. Բառասկզբում՝ Ա. աբէթ > աբիէթ / զյուրավառ սունկ/,
աթոռ > աթուէռ, ագի > ագէի, ագոաւ > ակոօվ, աղիօ > աղիօ,
աւել > ավիէլ, աւելել > ավիլիէլ, անիծել > անիծիէլ, աւերոկ >
ավիյօգ, աւերել > ավիէլ, /ն-ի հագելումով/ առաջ > առանջ,

արածել > այձիկ, արմուկն > այմուգ / ն-ի անկմամբ / անցանել > անցնիկ, առնուլ > առնուլ, անօրէն > անօւյին, ազանձել > աղընձիկ և այլն:

2. Բառամիջում՝ Ա. գարի > կայի, գարուն > կայուն, հաւկիթ > հավկիթ, հաւաքել > հավքիկ, կարել > գայիկ, կապար > գապայ, կարկուտ > գայգուդ, կարմիր > գայմիյ, կակուդ > գագուէդ, խաղող > խավուէխ, խառնել > խարնիկ, խանձող > խանձուէդ, բաղդավոր > պախտավուէյ, բարկութիւն > պայգուտին, ձագ > ծակ, պանիր > բանիյ, վառել > վառիկ, վառեսկ > վարիկ, վարել > վայիկ շարտիթ > վայտիթ, տակ / տրմատ / > դագ, փախչել > փախճիկ, փակչել > փակճիկ, թաղել > թաղիկ, թաղուիլ > թաղվիլ, թամել > թամիկ, թաղիրդ > թաղիկյատ, թարաթոշ > թարթէշ և լն:

3. Բառասկզբում՝

ա/ Միավանկ և մեկուկես վանկանի բառերում, գլխավորապես Մ, Ն, Ռ ձայնորդներից և Զ, Ղ կայնեղ շփականներից առաջ Ա-ն դառնում է Օ ինչպես աղ > օղ, աղբ > օղբ, աղտ > օղդ, ամպ օմբ, ազգ > օզկ, տո > օռ, աստղ > օսղը, ազբն > օսպը, ակն > օգ, իսկ անութ / ը / > օնթ:

Սանօթություն.- Բարբառում մեկուկես վանկանի բառեր գոյաւթյուն չունեն: Գրաբարյան մեկուկես վանկանիները բարբառում դառնում են երկվանկ կամ միավանկ, ինչպես աստղ > օսղը, ակն > օգ, / Տ-ի և Ն-ի անկմամբ /:

բ/ Երկվանկ բառերում ձայնորդներից առաջ Ա-ն է-ի և փոխվում: Օրինակ՝ ալիւր > էլիյ, արիւն > էլին, առնել > էնիկ, ուրիշ չունենք:

Գրաբարի "սաւելի" բառը արտասանվում է իվիէլ, վերջին-ի անկմամբ, իսկ առաւելուլ > իվըւնօլ, առ նախամասնիկի անկմամբ և Ն-ի ավելացումով:

"Ասել" և "առատ" բառերի ծկզբում ու > ը, ինչպես՝ ասել > ըսսիէլ, առատ > ըռօդ:

4. Բառամիջում միավանկ ու մեկուկես վանկանի բառերի մեջ՝ ա > օ.

ա/ Գլխավորապես ձայնորդներից առաջ, ինչպես՝ բարձ > պշճ

բան /գործ/ > պօն, բան /իր/ > պոնն¹, գալ > կօլ, գանկ > կօնդ,
թառ /հավի/ > թօռ, լալ > լօլ, լար > լօյ, ծառ > ձօռ, կալ > գօլ,
համ > հօմ, հաւ > հօվ, ճար > լօյ, ճանկ > լօնդ, մարդ > մօյդ
/մօյթ/, շար > չօյ, սալ > սօլ, տալ /բայ/ > դօլ, տանձ > դօնձ,
ցան > ցօն, ցաւ > ցօվ, թար > քօյ, թարձը > պօրհը, թանձը > թօ-
ռը, ծանր > ձօռը /ձօրը/, սանր > սօրը /սօռը/ 7 մանր > մօրը,
հարսն > հօյս /այս վերջինում ն-ի անկմամբ/ :

բ/ Պայթականներից առաջ՝ բակ > պօդ, ղատ > տօդ, թագ > թօդ
/թօջ/, ծակ > ձօդ, կապ > գօր, հակ > հօդ, շատ > շօդ,
պագ /համբաւյր/ > բօկ, պատ > բօդ, ցած > ցօձ:

գ/ Նփականներից առաջ՝ գազ /բույս/ > կօդ, թաղ > թօդ, խար-
խօդ, կաղ > գօդ, հազ > հօզ, մազ > մօզ, մաղ > մօդ, նաև՝ շահ >
շօմ, տառն > դօսը:

դ/ Ննչեղ խուլերից առաջ, կամ այն զեպքում, երբ բարբա-
ռում հանդես է գալիս շնչեղ խուլը, ունենք՝ Ա>Ո, ինչպես
հաց > հօց, բաց > պօց, թաց > թօց, ծափ > ծօփ, շափ > շօփ, տակ
/կապ/ > դօզ, կանաչ > գանոչ և այլն:

5. Բազմավանկ բառերի վերջին վանկում և բառվերջում.

ա/ Ն ձայնորդից առաջ և այլ բառերում՝ Ա>Ծ, օքինակ՝
ամռա > սմօր, գազան > կողօն, գանգատ > կանկօդ, խոնճան > խուն-
ջօն, ճակատ > շագօդ, ծիծաղ > ձըձօդ, աղքատ > ախկօդ, ուրախ >
ույօխ, դանակ > տանսօդ, աման > ամօն, տմբար > պմբօյ, գատարկ >
տայգօդ, պարտական > բայդրդօն, մուրացկան > մօւյոցգօն հոլա-
ծանք > հօլածօնք, հակառակ > հագառօդ, դատաստան > տադասդօն,
գանձանակ > կանձանօդ, թափթփան > թտփթըփօն, համար /կապ/ > հո-
մօ /Ռ-ի անկմամբ/, ապա > հաբօ /միայն վերջին երկու բառերն
են/:

Այս, այդ, այն ցուցական գերանունները, ինչպես բոլոր
արևմտահայ բարբառներում, այնպես էլ Հայքնի բարբառում? Կիսամայնի անկումով արտասանվում են ԱՍ, ԱԴ, ԱՆ, իսկ որևէ
անձ կամ իր մատնացույց անելու զեպքում Ա-ն փախվում է Ի-ի,

1. "Բան" բառը իր ցույց տալու զեպքում վերջից ստանում է
կրկնակ ն, պօնն, գործ ցույց տվող ոքան հից զանազանվե-
լու համար:

ստացվում է ԽՍՕ, ԽԳՕ, ԽԽՕ:

Հնում ԴԱՌ բարի փախարեն զօրծածվելիս է եղել «Համար» բառը, որ բարբառում արտասանվել է ՀԱՄՕՅ, որով այս բառը զանազանվել է «Համար» կապից:

թ/ Ա խօնարհման պատկանող բայերի Ա խօնարհիչը զանում է 0. օրինակ՝ բանալ > պանոյ, գանալ > տանոյ, ոսկալ > սիսոյ, մոռանալ > մօրոյ, մնոլ > միոյ և այլն:

6. Մի շանի բառերի միջում ու > է. Օրինակ՝ Հարթել > հելթիել, մաշել > մէշիել, պահել > բեյիել, ճանճ > շինչ, ուստիշ՝ բառը բարբառում նախ փոխվել է հառոց, ապա՝ հէզուէնչ:

7. Բազմավանկ բառերի մեջ ձայնորդներից և գլխավորապես ն, Ց խօւլերից տաղ ունենք ու > ը. Օրինակ՝ մարդարիտ > մայկըիդ, պարտական > բայզըզտն, կարկասն > գայզըզտն, կարկասի > գայզըզնիել, հարօնացու > հայսընցու, /ստուպարձումյունի/ տպարանչան > ոբըրչու /ան միշտանիկի սղմաժր/, գլխարայ > կըլիւրպոց /ա հոգակապը/, չարչարել > չայչըյիիել /Թ-ի սկելացաւմով/, Հարցանել > հայցընիել /այսանգ գրաբարյան տառնել՝ բայի Ա-ն զարձել է ը, որ տառներին գրվելիս զանում է ի/, շողացնել > շոզըցնիել, ծանրանալ > զանզըյնոյլ /բարբառում այս բառը հնում հնչվել է զանդր/:

8. Մի շաբթ եռավանկ բառերի երկրորդ վանկի Ա-ն սղվում է. Օրինակ՝ տաղակել > զարգիել, հաւաքել > հավշիել, հաւանել > հաւնիել, հաւանիլ > հավնիլ, մատանի > մաննի, գտանել > կըննուէլ, մտանել > մըննուէլ, հեծանել > հեզնուէլ, հարսանիք > հաշնիք, անցանել > անցնիել, խարազան > խորզօն, հապաղել > շարղիել, պագանել > բակնիել, թրանել > թըցնուէլ, պատանել > բառիել /Յ-ն ևս ընկել է/, պատոխան > բացխուն /Ա-ի սղումից տո > ց/, հառչել > հառչիել, համարել > համքիել, լուսանալ > լուսնոյլ, կտղապար > գտղօրսյ, նեղանալ > նիղնօյ, հաւասալ > ավգօլ և այլն:

Մանոթ.- Վերսիչյալ բառերը ցույց տրվում Ա-ի սղումը մեծ մասամբ անանցի սկզբնահնչյուն Ա-ին է վերաբերում:

Մանոթ.- Ընդհանրապես բարբառում երկրորդ վանկի Ա-ն պահ-

պանող բառեր թիշ կան, իսկ եղածի մեծամասնությունն էլ կը ունեկան բովանդակությամբ բառեր են՝ ինչպես, վճարել > գըշայիշիլ, բամահել > բամայիշիլ /Հ-ի անկումով/ փառաւոր > փառաթի /ձևափախմամբ/, պակասաւոր > բագաօավուէյ, պակասութիւն > բագասուտին, խաղաղութիւն > խաղաղուտին, չարչարանք > չարչայօնք, չարագործ > չարագուէյժ, ուրախանալ > ույախնուլ, լակաման > լագամօն, կաղամար > գաղամօյ, ուրանալ > ույանուլ, աւանակ > ավանօց, մթանալ > մընթանուլ /Ն-ի ավելացումով/, ճառագել > չառանցիիլ /Ն-ի հավելումով/, հրամանք > հըյամօնք, հրամայե > հըյամմէ /Ա-ին փախարինում է Մ-ն/ և հնչվում է կրկնակ Մ/, գաւազան > կավազօն, աւազան > ավազօն, ժամագիրք > ժամակիյք, արքայութիւն > այցայուտին, վարդապետ > վայտաբիիդ, պատարագ > բաղայտնոք /Ն-ի հավելումով/, շարական > շայագօն, սպաշինարանք > աբաշիյայօնք:

9. «Կարաս» բառում ունենք ալ > ուէ. կարաս > գայուէս:

10. «Մարաւ» և «տափակ» բառերում ալ > օ. ծարաւ > ձօյէկ, տափակ > դափօգ: Իսկ «ծարաւիլ» բառում ալ > ի. ծարաւիլ > ձիյէվենօյ: Բառը նախ աղավաղվել է և նախավանկի Ա-ն փոխվել է Օ-ի, իսկ վերջնավանկի Ա-ն է-ի և բոռք դարձել է ձօյէկ: Բարբառում տարիների ընթացքում ածանցման կապակցությամբ Օ-ն փոխվել է Ի-ի, ըստ բարբառի օրինաշփության, երկրորդ վանկի Ա-ն սղվել է, իսկ երրորդ վանկի Ա-ն փոխվել է Ը-ի, ԱՆ վերջամասնիկը՝ ՕԼ և բոռք դարձել է ԶիթՎԸՆՅԼ:

11. «Կարապետ» բառի նախավանկում ունենք ալ > ը. կարապետ > ըլյաբիիդ:

Սանօթ.- Այն արմատական բառերի Ա-ն, որ փոխվել է Օ-ի, ածանցման կամ բարդման դեպքում վերականգնում է իր հնչումը, օրինակ՝ բար > թօյ, բայց բարկոծիլ > թայձիձիիլ, ուրախ > ույօն, բայց ուրախանալ > ույախնուլ, չար > չօյ, իսկ չարութիւն > չայուտին:

Սանօթ.- Բարբառում բազմավանկ բառերի վերջին վանկում Ա-ն միշտ հնչվում է Օ, կամ իբրև մի այլ ձայնավոր: Եթե բառը եռավանկ է և երեք վանկում էլ Ա հնչյունը կա, ապա նախարդ վանկերում այն պահում է իր ձայնը, կամ սղվում է, իսկ վերգանկերում պահում է Օ-ի, օրինակ՝ կաղամար > գաղամօյ, կոչին վանկում փոխվում է Օ-ի, օրինակ՝ կաղամար > գաղամօյ,

ղապար > գաղքօյ, աւանակ > ավանօգ, հաւատալ > ավդոլ /Հ-ի անկ-
մամբ/, հրամանք > հըյամօնք և այլն:

Բացառություն են "ոլողալ" և "կապար" բառերը. լողալ > լէ-
ղալ, կապար > գաբայ:

Ա-Ն Օ-Ի ՓՈԽՎԵԼԸ կա նաև Համշենի բարբառում: Այս բար-
բառում հարակատարի ած վերջավորությունը ևս շատ հաճախ փոխ-
վում է ՄԱՆ-ի, որը բարբառի օրինաչափության համաձայն Հընչ-
վում է ՄՅՆ. օրինակ՝ կըյմօն /գրված/, աղցըմօն /փղացված/,
չիյցըմօն /չորացած/ և այլն: Հարակատարի ՄԱՆ վերջավորու-
թյունը, առանց հաջընյան հնչյունափոխության, կա նաև նոր -
ջուղայի և Զարսաճագի բարբառներում:

Ա

12 Այս քմայնացած ձայնավորով արտասանվող հայերեն բառեր մեջ
կան Հաջընի բարբառում: Ա հնչյունը գլխավորապես գործածվում
է փոխառնված բառերում, ինչպես և որոշ հայերեն բառերի ըս-
կըզբում, ինչպես՝ աղօթք > աղէցկ, այրել > այիէլ, աչք աշք
/աճկ/, աջ > աջջիկ, աշակերտ > աշգիէյդ և բառամիջում՝ բարակ
> պայօգ, խարազան > խարզօն, կարժ > գայշ, ճանճ > շանշ /չենշ/
ընդառ, ընդառ, ընդառ /այսպես, այդպես, այնպես/:

ՈՒ

13 Այս ձայնավորը ևս գործածվում է փոխառյալ բառերում.
օրինակ՝ յ՛՛ւքլուկ /անկողինները դարսելու հպուկ տեղ/ տան
պատի մեջ/, գուզալլանմիշնոլ /գեղեցկանալ/, քունչ /անկյունի
քուլան /թաղիքն օրածայր գլխարկ/, դուզ /ուղիղ, շիտակ/,
Գուլիզար, Սէմագուլ և այլն:

Ծ

14 Այս ձայնավորով հայերեն գավառական բառեր Հաջընի բարբա-
ռում միայն երկուսն են /չհաշված ոծարաւ" բառը, որ, ինչպես
ցույց ենք տվել, բարբառում արտասանվում է ձօյէվ, չօնթ
/ձախլիկ, թւատ/, չօքալիկ /թանի քամած, ժաժիկ/: Մնացածները
օտար բառեր են, որոնք մուտք են գործել բարբառ և դարձել
նրա սեփականությունը. Օրինակ՝ Ծնքա /բարկություն/, թօյէ
էնիէլ /մեջտեղ բերել, սերել/, օրթէլիկ /ընթրիթից բավական

Է

Այս ձայնավորը բարբառում գրեթե բոլոր դեպքերում մնում է անփոփոխ, բացի սսէր" և սկէս" բառերից, որոնցում շեշտի տակ դառնում է իէ:

15 Բառասկզբում՝ է", ձայնարկություն, էշ, ուրիշ չկա:

16 Փոխարինում է Ա-ին. արիւն>էյին, ալիւր>էլիյ, առնել >էնիէլ:

17 Փոխարինում է ՈՐ և ԻՆՉՈՒ դերանուններին. որ>էյ, ինչու>էյին, նաև ՕՐ բառին, օր>էյ:

18 Բառամիջում՝ մէջ>մէճ, մէջօ>մէճկ, մէկ>մէկ, տեր >ղէյ, նաև՝ մեծանալ>մէզնօլ, մեղու>մէզու, հերիւն>հէյին և այլն:

19 Փոխարինում է Ա-ին. ճանճ >յէնջ, մաշել>մէշիէլ, հարթել>հէյթիէլ:

20 դառնում է իէ. կէս>կիէսս, սէր>սիէյ, ուրիշ չկա:

Ը

21 Բառասկզբում՝

ա/ Հնչվում է կիսաձայն ա/կամ ռուսերեն և հնչյունի նման/ ընկոյզ>ընգիզ, ընկեր>ընգիէյ, ընկնել>ընգնիլ, ուրիշ չունենք:

բ/ Դրվում է շեշտի տակ, Ռ-ով սկսվող բառերի սկզբում, ինչպես՝ ըռահօն /ռահան/, ըրուպ /ռուփ/:

"Սպիտակ" ածականը արտասանվում է իսրիզօգ: Խախդիքով գործածվող բառերում դրվում է զ-ից Հետո, Օրինակ՝ ոչ թե զս /ըզսա/ այլ՝ զըսօ:

գ/ Բառամիջում բազմավանկ բառերի նախավերջին վանկում՝ Ա-ի անկումով և կրավորակերպ վերջավորվող հարակատար դերքայի մօն վերջամասնիկից առաջ. ինչպես՝ աղանձել>աղընձիէյ, աղանձնեկ>աղնձընիէգ, ամաշել>ամըշնօլ, արթնանալ>այտըննօլ, հասցնել>հասցընիէլ, անցված>անցըմօն, առնուած>առնըմօն, ածիլված>ածըլմօն, խանձուած>խանձըմօն և այլն:

դ/ Բնաձայն մակրայական բառերի միջում՝ կըթըր-կըթըր, թըթըր-թըթըր, թըթըր-թըթըր, փառք-փառք և այլն:

ե/ Փոխարինում է ն ձայնավորին առմիւ" բառի Հոգնակիի դեպքում. ն ձայնի անկման հետևածով՝ տեղափոխվելով ս-ից հետո, դրվում է ինձ անձնական դերանվան սկզբում. ամիսներ >ամսընի, ամիսներով >ամսընիյէք, ինձ >ընձի:

22 "Կշտանալ" բառում կուշտ բացարմատի Ու-ի Հնչյունափոխման պատճառով գաղտնավոնկ Ը-ն Հաջընի բարբառում դառնում է ն. ինչպես՝ զիշդանօլ:

23 Գաղտնավոնկ ունեցող բառերի մեջ, երբ Ն ոնգայինին Հաջընում է Ր բաղաձայնը, Ն Հնչյունը. սղվում է, իսկ Ռ-ից հետո Ը ձայնը Հնչվում է շեշտված. ծանր >ձոռը /ձօռը/, մանըր >մօրը, սանր >սօռը /սօռը/¹:

Դ

Այս ձայնավորը Հաջընի բարբառում, Հիմնականում պահում է իր ձայնը /բացի մի բանի դեպքերից/:

24. Բառասկզբում՝

ա/ Խրաւ >իյօվ, իր/թ/ >իթ, ինթ իրմով >ինթն իյանօթ², իշանել >իճնուլ, ինչպես >ինչուց /կարող է սինշացու" բառի հետ ևս կապ ունենալ/, ինչ >ինչթ, իւիկ >իւիկ:

բ/ Բոլոր Ե Հնչյունով սկսվող բառերում փոխարինում է Ե-ին. երկայն >իյգէն, երկինք >իյգինք, երազ >իյօզ, երես >իյիէս, երկաթ >իյգօթ:

գ/ Փոխարինում է գրաբարյան Յ կիսաձայնին, ինչպես՝ յստոկ >իսդօգ, յստոկել >իսդըֆիէլ: Թիշել" բառի Յ-ն ընկնում է յիշել >իշիէլ:

դ/ Փոխարինում է Ա-ին՝ սուելի" և սոսուելուլ" բառերի սկզբներին. աւելի >իվիէլ, առաւելուլ >իվըլնօլ. Նու՝ ԱԶՍ, ԱԶԴ, ԱՑՆ դերանունների դեպքում՝ ԻՍՈ, ԻԴՈ, ԻՆՕ:

ե/ Դառնում է Ը միայն սինձ" դերանվան սկզբում՝ վերջից

1. Ը ձայնավորը գաղտնավոնկում գրվում է նաև Ն. Զուղայի բարբառում. զարթնել >զարթընել, խրտնել >խըրդընել, իըծպել >իըծպէլ. /Հ. Անտոյան. Քնն. Նոր-Զուղայի բարբառի, էջ 65, Երևան, 1946թ./:

2. Ք շնչեղ խույից առաջ 0. գրվելը գրաբարի Հոգնակի գործիականի ԱՌՔ-Ն է, որ հետո դարձավ ՕՔ: Վերևում գրվածը ենթարկվում է այս կանոնին:

Ի ավելանալու պատճառով. ինձ > ընձի /այս բառում Զ-ն պահով
է իր ձայնը/:

զ/ Դրվում է որպես նախղիր. զատ > ի զօդ, ժամ > ի ժօմ /Ե-
կեղեցի/, այսքան:

է/ Փոխարինում է Օ ՀԱՅՈՒՆԻՆ, օրօրել > ի յիշիել, ուս-
թել > ի լիյիել, ուրուն > ի լիյուն:

25 Բառամիջում՝

ա/ Պահում է իր ձայնը. Հիւանդ > Հիվօնա, Հին > Հին, Հի-
նել > Հինիել, Խիստ > Խինձ, ուրիշ չկա:

բ/ Դառնում է ՈՒ. Հիմայ > Հումմօ /միայն այս բառն ու-
նենք:

գ/ Փոխարինում է Ե-ին. բերան > պիյօն, բերել > պիյիել,
ուռեցք > ուռիցկ:

դ/ Փոխարինում է Ը գաղտնավանկին և ՈՒ ձայնավորին. Կը-
շեռք > գիշերք, կշտանալ > գիշղանօլ, պուտուկ > բիղիկ /միայն
սրանք են/:

ե/ Սղվում է "գիշեր" բառում ԳԻ նախավանկի անկումով.
գիշեր > շիեյ:

զ/ Փոխվում է Է-ի. Հինգ > Հինգ, Կօշիկ > գօշեց, ուրիշ
չունենք:

է/ Փոխարինում է ՈՒ երկ ՀԱՅՈՒՆԻՆ. Կապոյտ > գարիդ, բոյն
> պին, լոյս > լիս, բոյր > թիյ, կոյր > գիյ, պատրոյգ > բա-
ռիք, պատրոյս > բառիս, պոռյգ > բըռիք /բըրիք/ և այլն:

26 Ավելանում է "շնորհաւոր" բառի սկզբում և "մինչեւ" բա-
ռի վերջում. շնորհաւոր > իշնավուէյ, մինչեւ > ինչվի. Առաջի-
նը ո՞ն ՇՆՈՐՀԱԽՈՐ" ձևի միացումն է, իսկ երկրորդը. մեր կար-
ծիքով, կրկնակի նախղիրով գործածված գրաբարյան ձևի մնացոր-
դըն է, օր. սՄինչ ի գարուն", որը մի քանի բարբառներում
դարձել է "ինչվան", իսկ այս բարբառում՝ ինչվի:

27 Բառավերջում՝ ձի > ծի, գարի > կայի, տարի > դայի, բարի >
պայի, գինի > կինի, մատանի > մանի և այլն:

- 28 Ու ձայնավորը հաջընի բարբառում, բառասկզբում պահում է իր ձայնը. ունենալ>ուննօյ, ուրախութիւն>ույախուտին, ունեցը>ուռիցկ, ուսանել>ուսանիէլ, ուրագ>ույօկ և այլն:
- 29 ՈՒՐ ղերանվան սկզբում ավելանում է Ե երկրաբարը և ղառնում է ԵՐԻ, կամ ԵՐԻՑ: Այս ԵՐԻՑ"-ը ԶՈՐՆԵՆՏ և ԳԵԼԻԿԵՆՏ թաղերի խոսվածքում արտասանվում է ԵԵԾ": Ե՞Շ զաշոս կամ Ե՞Շ զաշտոս, ո՞ւր կերթաս": ՈՒԵՇՈՒՄ ըստիյ<ո՞ւմ ասացիր": ՈՒՐ ղերանունը մԱԼԵՆՏԵՐ": Թաղի ԾԻՆ բարբառում արտասանվել է ՆԱԿ ՎՈՒՅՈՒՄ. ԱՆՈՒՅՈՒՄ ԹԻՉՈՒԵԼԻՅ": Ո՞ւմ ԽՓԵՑԻՐ":
- 30 Բառամիջում՝ ՈՒ. գարուն>կայուն, բուրդ>պույթ, արմուկըն>պյմուգ, բուսանիլ>փուսնիլ, ձուկն>ծուգ: Նաև ՈՒԹՅՈՒՆՈՎ ՎԵՐՀԱցող բառերում:
- 31 Փոխվում է Ի-Ի. բունկալ>փինգօլ:
- 32 Փոխվում է ՈՒԷ. կակուղ>գաֆուէղ, ուրիշ չունենք:
- 33 ԱՈՒՁԵԼ" և ԱՈՒՏԵԼ" բառերի սկզբներում փոխվում է ԱՅ ԵՐԿ ԸՆԺՈՒՆԻ, աւգիէլ. բայց այս բառի անորոշ ղերբայական ձևը չեր գործածվում: Արդեն 1915 թվականին շատերը ԱՈՒՏԵԼ" բայի անորոշ ղերբայական ձևն էլ չէին գործածում. գործածվում էր սահմանական ՆԵՐԿԱՆ>գավղիէմ, կամ ԳԵ գավղիէմ, ԳԵ գավղիէմ ձևերը:
- 34 ԱԶՈՒԱՆ" բառը ԾՆԺՎՈՒՄ է ՀՈՒՎՈՆ, ԱՊՆՈՒՆ" բառը՝ ԱՆՈՆ. Այս ՎԵՐՀԻՆՈՒՄ ՈՒ-Ն ղարձել է Օ:

0

Օ ձայնավորը հայերեն բառերի սկզբում և միջում հազմդեպ է ԾՆԺՎՈՒՄ իր սովորական ԾՆԺՈՒՆՈՎ:

35 Բառասկզբում՝

ա/ Օ>օ. ՕՐԾՆԵԼ>օրԾնիէլ /օխնիէլ/. ուրիշ չկա:

բ/ Օ>ի. օՐՈՐԵԼ>իյիյիէլ, օՐՈՒԻԼ>իյվիլ, ուրիշ չկա:

գ/ Օ>է. օժ>էժ, օղ>էղ, օր>էյ, օգտել>էղգիէլ /բակել/:

դ/ Օ>ու. օտար>ուզօյ, օրէնք>ույինք, օրօրոց>ույլու-

էղկ, յօնք>ունթիել /յ-ի անկմամբ/:

96 Բառամիջում՝ խօսք>խօսոնք, խօսակցիլ>խօսիչը զիկիլ, կօ-
շիկ>գօշէգ, կրօն>գըյօնք, ցօդիլ ցօդիլ. ուրիշ չգտնեմ:
97 Փոխվում է հ, է, ՈՒ, ՈՒԷ, Ը ՀԱՅՈՒՆՆԵՐԻ ՀԵԹԱԿԱՎԱՐ բառերի
մեջ. մօտ>մէդ, անօսր>նիյսր /Ա-ի անկումով/, անօսրանալ
>նիյսընօլ, խօսիլ>խուսիլ, անօրեն>անույին, նօթի>անու-
թի /Ա-ի ավելացումով/, կօշկակար>գուշգօյ, կարօտ>զայուչդ,
պկօս>պգուչս, ցօդել>ցըդիել, գօտի>կուտի, մօրուք>մու-
յուք և այլն:

98 Փոխարինում է Ա-ին /տես էջ 15-16/:

99 Բառասկզբում և բառամիջում փոխարինում է Ո-ին. ոսկի>
օսգի, նաև իսգի. խռովութիւն>իցրովուտին, Հողվարք>Հողվէդի,
դի, նաև ՈՒ-ին, ունենք միայն անուն բառը. անուն>անօն:

40 Սղվում է անօթութիւն բառում՝ դառնալով անթօւտին:

Ե

Գրաբարյան Ե-Ն Հաջընի բարբառում մի բանի բառերի սկզբում
ՀԱՀՅՈՒՄ է ՅԵ և ԻԷ երկհԱՀՅՈՒՆՆԵՐԻ ձայնով: Այդ բառերն ԵՆ՝
գրաբարյան ԵՕԹՆ /ԵԿԹՆ/, ԵՐԲ, ԵՍ և ոելանել՝ բայի ԵԼ Հրա-
մայական ձևը: Այսպիսով, Ե-Ն այս բառերում դառնում է եռա-
հԱՀՅՈՒՆ. ԵԱ>ԵՒԷ, ԵօԹՆ>ԵՒԹԸ, ԵՐԲ>ԵՒԷՓ, ԵԼ>ԵՒԷԼ: Բա-
ցի ՎԵՐՈԿԻՇՅԱԼՆԵՐԻՑ և Ե ԽՈՆԱՐՀՄԱՆ անորոշ դերբայի ՎԵՐԺԱ-
ՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ /ՀՀԱՉՎՃ Աճանաշել/ և ումաշել՝ բայերը/,
Մյուս բառերում Ե ՀԱՅՈՒՆԾ զանազան փոփոխությունների Է ԵՆ-
ԹԱՐԿՎՈՒՄ Կ ԽՈՆԱՐՀՄԱՆ պատկանող բայերի Ե ԽՈՆԱՐՀԸ զա-
նում է երկրարրառ: ԻԷ. ցանել>ցանիել, գրկել>կըյդիել,
պահել>բեյիել և այլն:

41 Բառասկզբում՝

ա/ Ե>ի. Երկինք>իյգինք, Երկիր>իյգիր, Երկայն>իյգին,
Երկաթ>իյգօթ:

բ/ Ե>է. Երկու>էյգութ, Եղիճ>էղինջ, Երեսուն>էյի-
սուն, Եղսա>էղսօ /Մշո բարբառում՝ էղսօ և այլն:

գ/ Ե>ա. Եղբայր>ախպայ¹, ուրիշ չունենք:

1. "Եղբայր"-ը ԱԽՊԱՐ արտասանվում է արևմտահայ, գրեթե, բո-
լոր բարբառներում, բացի Խարբերդի, Զմշկածագի, Զարսան-

դ/ Ե>Ու. երդում>ույտում. միայն այս է:

42 Բառամիջում՝

ա/ Ե>ի. թեթև>թիթիէվ, ցերեկ>ցիյիէգ, բերան>պիյօն,
մերկ>միյգիգ, ներդոյ>նիշգիէվ, նեղանալ>նիղնօլ:

բ/ Ե>ը. ճեղթել>չընգիէլ, ճեղթ>չընգուէյ, խեղդել>
Խըխտիէլ:

գ/ Ե>է. մեծանալ>մէզնօլ, մեղայ>մէլօ, մեղաղրել>
մեղտըյիէլ, հերկել>հէյգիէլ, հերիս>հէյիօ և այլն:

դ/ Ե>ա. մեքենայ>մաքինա /այս, որպես նոր բառ, կրել
է թուրքերենի ազդեցությունը/:

ե/ Ե>ու. հեծանել>հեզնուլ, գտանել>կըննուլ, մտանել
>մըննուլ¹:

43 «Ճանաչել» և «ամաչել» բայերում դառնում է Օ: Սակայն
այդ բառերը երկու անգամ փոփոխվել են: Նախ, ըստ արևմտահայ
լեզվի, դարձել են ճանչնալ, ամչնալ: Եզ քանի որ Հաջընի
բարբառում Ա խոնարհման բայերի Ալ վերջավորությունները
դառնում են Օլ, ուստի այս բառերն ել նույն օրենքի համա-
կայն հնչվում են Օ՝ ճանչել>լաշնօլ, ամաչել>ամըշնօլ:

44 Գրաբարյան Ո-Ն Հաջընի բարբառում, ընդհանրապես, հնչվում
է իբրև երկրարբառային Ոէ, ՈՒէ, Կամ ՎՈ, ՎՈՒէ: Այդ պատճա-
ռով էլ զանազան փոփոխություններ է կրում այն բառերում,
ուր իբրև երկրարբառ չի հնչում:

45 Բառասկզբում՝

ա/ Ո>վուէ. ոտք>վուէդք², ո՞վ>վուէվ, ո՞ր>վուէյ, որդ
>վուէյտ, ոսպն>վուէսպ³ /ուէսպ/, ոստ>վուէստ /ուէստ/:

բ/ Ո>վօ. ոռ /հետույթ/ >վօր. միայն այս բառն է:

Հաղի, Կեմերէկի, Տիգրանակերտի, և Ուրմայի բարբառներից,
որոնցում արտասանվում է «պանդար», Ղարաբաղի, Ապարանի և
Սևանի ավազանի բարբառներում՝ Անդէր:

1. Ե-ը ՈՒ դառնում է, ընդհանրապես, Ան ածանցն ունեցող բա-
յերի դերբայական ձևում:
2. Սերաստիայի բարբառում՝ վէղք, վէսպ, վաէվ. Արտաշտի
բարբառում՝ վազք, Զմ., Զրս: Վէվ, Ակն, Բալու բարբառնե-
րում՝ վօվ:
3. ո՛սպն>վուէսպ³ բառում պ-ն պահում է իր ձայնը:

գ/ Ո > օ. ոսկի > օսգի, ողորմութիւն > օղորմուտին, ողորմած > օղօյմած:

դ/ Ո > ը. ողողել > ըղղիէլ, ողողունք > ըղղունք, որիզ > ըրուզ:

ե/ Ո > ի. ոլորել > իլլիյիէլ, ոլորուն > իլլիյուն, ոսկի > իսգի, ջորնենց թաղ:

զ/ Ո > ու. ոսկոր > ուսգու, ոչիլ > ուճիլ, ուրիշ չունենք:

46 Բառամիջում՝

ա/ Միավանկ բառերում, ընդհանրապես և և Մ ձայնորդներից առաջ՝ Ո > է. Հով /հողմն/ > հէվ, կով > գէվ, քով > քէվ, ծով > ծէվ, ծոմ > ծէմ, խոռվ > խըրէվ, կոտոշ > գէղէշ, մորթի > մէյի, լողալ > լէղալ և գործիականի վերջավորությունները:

բ/ Ո > ի. նորոգել > նիյիէլ /նորել/, լոգանալ > լինկնօլ, կոտեմ > գիղիմ, հոգի > հիզմի:

գ/ Ո > ոչ, ուչ. կող > գուղ, խոտ > խուղ, բողկ > բուղոց, սոխ > սուչին, գող > գուղ, նոր > նուչյ, սխտոր > սըխղուչյ, հո հող > հուչող, հոտ /բույր/ > մուղ, թոռն > թուղոն, հոր /ջրի/ > մուկչյ:

դ/ Ո > ը. կորսուիլ > գըսըմվիլ, թոռոմել > թըռմիլ, բորբոս > պըյըրուէս:

ե/ Ո > ու. կողպաթ > գուղբաթ, խոնջան > խունճուն, խոշոր > խուշուչյ, կոճակ > գուչօգ և այլն:

զ/ Ո > օ. շողիթ > շօղիթ, շողացնել > շօղցընիէլ, մոռանալ > մօռնօլ /մօրնօլ/:

է/ Ո > օ. չոքել > չօքիլ. միայն այս գւառական բառն ունենք:

ը/ Ո > ա. մոխիր > մախիյ. միայն այս է և հազվադեպ է զործածվաւմ:

Հ7 Բացառություն է "ոկոխել" բառը, կոխել > գոխիէլ:

1. Հ ՀԱՅՐՈՒՆԾ մ-ի փոխվելը կա նաև Ակնա, Սեբաստիայի, Ասլան-Բեկի բարբառներում: Սեբ. Ֆէղ, Ֆէղ, Ֆէր. Արս. Ֆող, Ֆոտ, Ֆոր, Ակն՝ Ֆէղ, Ֆէղ, Ֆէր:

ԱՅ

48 Այս երկրաբառը հաջընի բարբառում իր իսկական հնչմամբ չի հանդիպում, այն կրում է հետևյալ փոփոխությունները.

ա/ Միավանկ բառերում դառնում է Ա կամ Ա, Օր. գայլ>կալ, փայտ>փաղ, հայս>հաս, այլ>ալ և այլն: Այս, այդ, այն ցուցական դերանուններն արտասանվում են ԱԱ, ԱՌ, ԱՆ: Անորոշ առումով գործածվելիս և չափ ու քանակ ցույց տալու պարագային, իսկ հատուկ մատնանշումով, շեշտի տակ՝ հԱՕ, հԴՕ, հՆՕ, որ փոխարինում է ՍԱ, ԴԱ, ՆԱ դերանուններին: հօօ մօյտը, ինցո դունը, ինօ գէկը, ոստ /այս/ մարդը, զա /այդ/ տունը, նա /այն/ կովը": Աս սալիճ շօմ էյի, ան վօխո զայայ էյէյի: Աղ դըղայ վէյէն միշտո: ոմյս անգամ շահ արի, այն ժամանակ վնաս արել էի": ոմյդշափ վերից մերթար": Միայն //զ/մայլիլ" բառում հնչվում է մայլիլ:

բ/ Շեշտի տակ Ա հնչյունի փոփոխման կապակցությամբ ստացվում է էֆ երկնչյունը. Հայիլ>հէյիլ, Հայելի>հէյլի, Հայ>հէյ:

գ/ ՎերԱթ բառում ԱՅ-ը փոխվում է Օ-ի, իսկ Ր-Ն՝ Ց-ի և կազմվում է ԻՅՕ եռահնչյունը. Վերայ>վիյօ: Նույնպես երկվանկ բառերի վերջին վանկում ԱՅ-ը դառնում է Օ. տղայ>գըզօ, մեղայ>մէզօ, հինայ>հինօ, փեռայ>փիսօ:

դ/ ԱՅ-ը փոխվում է ա-ի և է-ի. Խայթել>խէթիէլ, ճայթել>շէթտիէլ, այրել>պյիէլ, թայլել>թէլէլէլ, այրիլ>էյիլ, այգի>էգգի, այր/իկ/>էյիկ /այս դեպքում էլ առաջացել է էֆ եռահնչյունը և ԱՅԻՒ բառահնչյունը:/

ՈՅ

49 Գրաբարյան ՈՅ երկրաբառը միավանկ բառերում դառնում է Օ, ՈՒ, Ի. օրինակ՝ թոյլ>թօլ, բոյն>պօն /պին/, գոյն>կուն, լոյս>լիս, ընկոյզ>ընգիզ, ողկոյզ>գիզ /ՈՂ նախամասնիկի անկումով/ զրոյց>զիյից, նաև /զըյից/. այս բառը լինում է եռահնչյուն ԾՅԻ, ԻՅԻ:

ԾԱ

50 Այս երկրաբառը Հաջընի բարբառում գործածվում է օտար բառերում, որոնք դարձել են բարբառի սեփականությունը, բայմբ-

մատի վրա առնելով լինել > նու օքանղակ բայց, կամ անել
> էնիէլ բայց. օրինակ՝ դահանմիշնու սղիմանալ, հենվել".
/թուրք. մայդումակ /, օքանմիշնու "արթնանալ" /օգար-
մակ եայդում-էնիէլ "ոգնել" /յարձու / եասօն-էնիէլ
"արգելել" /յաճակ/

ԻԱ

51 Այս երկրարբառը հաջընի բարբառում դառնում է եռահնչյուն՝
հՅԱ. օրինակ՝ Եղիա > էղիյա, Սոճիա > Սոժիյա, միաւոր > միա-
վուէյ : "Մըրիամ" բառը այս կանոնին չի ենթարկվում. Մարիամ
> Մայօմ :

ԵՒ

52 Եեշտի տակ ԵՒ-Ն դառնում է հէվ, իսկ շեշտից առաջ հև, ար
արեւ պյյիէվ, անձրեւ առիէվ, ալեւոր Հալիկուէյ, թերւ
>թիթիէվ, թեթևանալ > թիթիվնու, սևանալ > սիվնու, ձեւ > ձիէվ,
ձւել > ծիվիէլ և այլն:

ԱՒ

53 Գրաբարի աւ երկրարբառի դիմաց հաջընի բարբառում ունենք
Ա և Վ հնչյունները. աւազան > ավազօն, գաւազան > գավազօն,
աւերակ > ավիյօգ, աւել > ավիէլ : Եեշտի տակ՝ իվ. աւելի > իվի-
էլ. "աղաւնի" բառում դառնում է ՎԸ. աղաւնի > աղվընի : "հ-
րաւ" բառում՝ ՕԸ. իրաւ > իյօվ :

ԻՒ

54 Այս երկրարբառով բառասկզբում ունենք բառ "իւղ" և
"իւրեան", որոնցից առաջինում դարձել է եռահնչյուն եիէ
/նույնիսկ քառահնչյուն/, իսկ երկրորդում՝ Ի. իւղ > եիէդ,
իւրեան > իյիէն:

55 Բառամիջում՝ Ի. արիւն > էյին, ալիւր > էլիյս, էիւն > էին,
և բոլոր թիւն վերջավորությունները՝ ՏԻՆ...սգիւղ" բառը՝
գիէղ :

ԵԱՅ

56 Այս եռարբառով հաջընի բարբառն ունի միայն "ոքիստո-
նեայ" բառը, մյուս բոլոր դեպքերում դառնում է է. փայտեայ

> փաղէ, երկաթեայ > իյգոթէ և այլն:

108

57 Գրաբարյան ւոյ եռաբարբառը Հաջընի բարբառում զառնում է ՈՒ, օրինակ՝ Հոգւոյ > հուզգու, այգւոյ > էցքու, տարւոյ > դայու:

ՈՒԱ ՈՒՅ ՈՒԻ

58 Այս եռաբարբառների ՈՒ-երը բոլոր դեպքերում փոխվում են Վ-ի. լեզուանի > լէզվօնի, աստուած > ասվօն /սարօն/, կատուածագ > գաղվուծակ, աղուէս > աղվէս, ծեծուիլ > ծիծվիլ... լուալ" բառը, դրաֆոխված ձևով, արտասանվում է վըլանօլ: Ընդհանրապես բարբառում այս տիպի բառերը քիչ են, գրեթե միայն վերը նշվածներն են:

